Այժմ սկսեցին նրանք այլ լեզու բանեցնել, սկսեցին խեղճ ձեւանալ, որ պարոն բժշկապետի կարեկցութիւնը դարձնեն իրանց վրայ, ասելով. աղքատ ենք, ընտանիքի տէր ենք, «անօրէնի» ձեռքում գերի ենք, մեր յոյսը դրել ենք այդ իրեղէնների վրայ, այդ պատճառով ստիպուած ենք այդպէս էժան, շա՛տ էժան վաճառել: Նրանք մինչեւ անգամ ակնարկեցին, եթէ գնող լինէր, աւելի մեծ ուրախութեամբ պատրաստ կը լինէին իրանց զաւակները վաճառել եւ չզրկուել այնպիսի հազուագիւտ իրեղէններից, որոնց համար, եթէ լաւ «մուշտարի» պատահի, կարող են ահագին գումարներ ստանալ, միայն կարիքը եւ չքաւորութիւնը ստիպում է նրանց վաճառել:

Ասլանը, այդ բոշաներից ազատուելու համար, ընտրեց մի քանի իրեղէններ եւ ձգեց նրանց մի քանի ոսկիներ, ասելով թէ միւսները իրան հարկաւոր չեն: Նրանք վեր կացան եւ դարձեալ կարգով շարուեցան դռան մօտ եւ, երկար շնորհակալութիւններ եւ օրհնութիւններ թափելուց յետոյ փորձում էին հեռանալ, բայց մտածեցին եւ դարձեալ մեխուած մնացին իրանց տեղում, ընդունելով մի այնպիսի կիսածիծաղ դէմք, որ աւելի լացի նախերգանքին էր նմանում:

— Այլեւս ի՞նչ ունէք ասելու, — հարցրեց Ասլանը:

— Ձեր ողջութիւնը... ի՛նչ պիտի ունենանք ասելու, — պատասխանեցին եւ դարձեալ կանգնած մնացին իրանց տեղում:

Ես մի կերպով հասկացրի, թէ չէ կարելի այդքան ձանձրացնել պարոն բժշկապետին: Մահտեսի Թորոսը փոխանակ հեռանալու, ձեռքը գողտուկ կերպով մեկնեց դէպի ինձ եւ դարձեալ ցուցամատի ու բթամատի պտղուցները սկսեց քսքսել միմեանց հետ: Վերջապէս նրանցից մէկը յայտնեց, թէ տանը ուրիշ շատ եւ աւելի լաւ բաներ ունեն, կը ցանկանա՞ր պարոն բժշկապետը, որ բերէին, ցոյց տային:

— Դուք հաւատացնում էիք, որ ուրիշ բաներ չունէք, — նկատեց Ասլանը ծիծաղելով:

— Է՛հ յարգելի բժշկապետ, — պատասխանեց մահտեսի Թորոսը գլուխը շարժելով եւ տակից աղոէսի նման նայելով Ասլանի երեսին, — գիտէ՞ք ինչ է ասում թուրքի առածը:

— Չգիտեմ:

— «Գայլի բոյնից ոսկորը պակաս չի լինիե...

— Այդ ես հասկանում եմ...

— Կը հրամայէ՞ք, պարոն բժշկապետ, որ բերենք: